

У НАС В ГОСТЯХ

ՍՈՒՐԵՆ ՄՈՒՐԱՂՅԱՆԻ «ՄԱԳԱՂԱԹՆԵՐ» ՊՈԵՄԸ

Նվիրվում է պրոֆեսոր Միխայիլ Դավիդովիչ Ամիրխանյանին

Մ. Մ. ԳԻԼՎՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ

gilavyan.meline@mail.ru

Հոգիվածում քննության են առնվում նորագույն շրջանի հայ մանկագիր Սուրեն Մուրադյանի պոեմի հայրենասիրական, դաստիարակչական, ճանաչողական նշանակության գեղարվեստական յուրահատկությունների վերաբերյալ հարցերը: «Մագաղաթներ» պոեմում մեր պատմությունը մանուկ ընթերցողին ներկայանում է որպես հոգևոր մաքառումների արարման, ստեղծագործ մտքի, փառահեղ հաղթանակների մի ճանապարհ, որը սկիզբ է առնում Հայկի ու Արայի ժամանակներից ու հասնում մինչև Ավարայր, Սարդարապատ ու Մատենադարան: Պոեմն արժանացել է բարձր գնահատականի և նրա մի շարք հատվածներ տեղ են գտել դասագրքերում ու ընթերցարաններում:

Բանալի բառեր և արտահայտություններ. *հայրենասիրություն, պոեմ, մագաղաթներ, ազգային արժեք, ոգի, ճակատագիր, պատմության քառուղի:*

Ս.Մուրադյանը, այն քիչ բանաստեղծներից է, որ հիմնականում գրել են մանուկների համար ու մանուկների մասին՝ ընթերցողների առջև բացելով մի ուրույն աշխարհ, որը շնչում է հայրենասիրությամբ, հայրենի եզերքի անկրկնելի գույներով ու հնչյուններով:

Մայրենի լեզվի, գրի ու մագաղաթի, դպրության ու լուսավորության փառաբանությանն են նվիրված Սուրեն Մուրադյանի բանաստեղծություններից ու պոեմներից շատերը: Հայոց հանճարի ոգով ստեղծված մագաղաթների էջերում մանուկ ընթերցողներին սպասում են բազմաթիվ հրաշքներ, որոնց հետ նա դեռևս պիտի հաղորդակցվի իմաստանա ու մաքրվի:

Ս.Մուրադյանը մանուկ ընթերցողների առջև բացում է մագաղաթների խունացած, այրամբ ներծծված էջերը, նրա հետ ճամփորդում մեր պատմության քառուղիներում: Երախտիքի ջերմ խոսքերով ու ակնածանքով է բանաստեղծը հիշատակում մեր մեծերին սկսած Նարեկացուց մինչև Սարգիս Պիծակ, «Մշո ճառընտիրից» մինչև «Պարզատումար»: Հայոց հանճարի ստեղծված մագաղաթների էջերում մանուկ ընթերցողներին սպասում են բազմաթիվ հրաշքներ, որոնց հետ նա դեռ պիտի հաղորդակցվի, իմաստանա, մաքրվի:

Պոեմի հենց առաջին տողերում բանաստեղծն ընթերցողի առջև փռում է մագաղաթների անգին գանձերը, որոնք ինչքան էլ թալանվել ու կողոպտվել են, չեն սպառվել, որովհետև Հովնան գրիչի նման հագարավոր մարդիկ քարից հաց քամող «գմբուխտ թանաքով, խոտերի ծաղկի գույներով պես-պես» վանքերի խցերում ու խոնավ քարայրներում, արհամարելով քաղցն ու ծարավը, ցուրտն ու մութը, մոմի աղոտ լույսի տակ տառեր են շարել մաքուր ու անթեղ:

Ս.Մուրադյանը ներկայացնում է «Մշո ճառընտիրի» պատմությունը, որի դաստիարակչական նշանակությունը դժվար է գերազնահատել:

Երեխան պոեմի միջոցով ոչ միայն հաղորդակցվում է ազգային արժեքներին, այլև համակվում է դրանք լույսի պես պահպանելու ոգով: Նրա համար կողմնորոշման չափամիջ է դառնում ժողովրդի ինքնամոռաց սխրանքը, որը դրսևորվում է «Մշո ճառնտիրը» նախ սերջուկներից, այնուհետև թուրքերի ճիրաններից փրկելու ժամանակ:

Ավեր Մուշի փողոցներում

Գրոշներ է մեկը մուրում,

– Մարդիկ ,արեք ողորմություն՝

«Ճառընտիրին» ի փրկություն... [1, 271]

Մարդիկ ազգովի դառնում են մուրացկան, հավաքում են մեծ փրկագին և ազատում գիրքն այդ թանկագին, որը մոտ յոթ դար հանգրվում է Առաքելոց վանքում:

Մանուկ ընթերցողի համար ոչինչ այնպես ուսանելի չի կարող լինել, ինչպես եղեռնի ահասառսուռ օրերին հայ կնոջ ձեռքով «Ճառընտիրի» կեսը փրկելու և սուրբ Էջմիախժին հասցնելու պատմությունը: Հայ երեխան պետք է դաստիարակվի այն հոգեբանությամբ, այն նվիրումի ոգով, հասկանա, որ միայն մեր տեսակին է հատուկ առանց ավստսանքի թողնել ողջ ունեցվածքը և փրկել երեխային ու մագաղաթյա ձեռագրերը:

Ընթերցողին տանելով Մատենադարան Ս.Մուրադյանը ներկայացնում է «Ճառընտիրի» մյուս կեսի ճակատագիրը.

Չույգ թերթերը ճամփեց Անին
 Չորս եղավ Ախթամարից,
 Ուրիշ չորս թերթ վանքից Վարագ,
 Էլի երկուսն՝ Այրի ձորից,
 Չորս թերթերն էլ Փարիզ, Կոկանդ
 Վերադրձան, բույն հյուսեցին
 Գրատանը այս արևկա: [3, 275]

Մանուկ ընթերցողին Մատենադարանը ներկայացվում է որպես մեր ստեղծագործ ոգու մարմնացում, անսպառ մի զանձարան ուր «Նարեկացու հետ, Մաշտոցի կողքին» հպարտ բազմել են հույն Հերոդոտոն ու մեծ Հոմերոսը, Դանթենուրիշ շատ ու շատ մեծեր: Այստեղ մեր պատմությունն է, մեր ոգեղեն զանձերը, մեր լեզուն ու հայրենիքը. «Այս պոեմը ասես հիմներգ է ժողովրդի անմահության, ասք գրի և ոգու, – նշում է Լ.Կարապետյանը: Մաքառեցին, կռվեցին, նահատակվեցին, ցիրուցան եղան աշխարհով մեկ մագաղաթները մեր, բայց հետո որպես փյունիկ նորից հառնեցին և վերադարձան երամ-երամ օջախը հայոց» [2, 269]:

Հանգիստ են առնում այս հովանու տակ
 Ձեռագրերը բյուրավոր ու թանկ:

Մեր պատմությունն է այս գրերի մեջ
 Դրանք մեր ոգու գանձերն են անշեջ,
 Հնձվորի նման ննջում են հոգնած՝
 Մաշտոցն է հսկում անդորրը նրանց: [3. 276]

Պոեմը նախատեսված է միջին տարիքի դպրոցի երեխաների համար: Գրված է մատչելի լեզվով, արտահատչամիջոցներն ու պատկերավորման, կերպարների բացահայտման ձևերը հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու մեր պատմության վերաբերյալ: Պոեմի սյուժետային կառուցվածքի մեջ յուրաքանչյուր գլուխ կառուցված է կոնկրետ դեպքերի, բնավորության դրսևորումների ու իրավիճակների բացահայտմամբ: Պոեմը բացահայտում է հայի բնավորության հատկանիշները, պատկերելու մեր ազգային բնավորության գծերը՝ կենսասիրությունը, հայրենասիրությունը, իմաստությունը, խիզախությունն ու պարզությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Գիլավյան Մ.* Ժամանակակից հայ մանկագիր բանաստեղծներ, Եր., 2004.
2. *Կարապետյան Լ.* Դասը վարում է գրողը, Եր., 2002.
3. *Մուրադյան Ս.* «Մրբաբաղ», Եր., 1990.

ПОЭМА СУРЕНА МУРАДЯНА «СВИТКИ»

М. М. ГИЛАВЯН

АГПУ имени Хачатура Абовяна

В статье рассматриваются вопросы художественных особенностей патриотического, воспитательного и познавательного значения поэмы современного армянского детского писателя Сурена Мурадяна. В поэме «Свитки» армянская национальная история представлена юному читателю как путь духовных подвигов,

творческой мысли и славных побед, начинающийся со времён Айка и Ара, охватывая временной промежуток до Аварайра, Сардарапата и Матенадарана. Поэма получила высокую оценку, и ряд её фрагментов нашли своё место в учебниках и хрестоматийных сборниках.

Ключевые слова: патриотизм, поэма, свитки, национальная ценность, дух, судьба, перекрёстки истории.

SUREN MURADYN «SCROLLS» POEM

M. M. GILAVYAN
ASPU

The article examines the issue of artistic peculiarities of patriotic, educational and generative significance of the poem by the modern Armenian children's writer Suren Muradyan. In the poem 'Scrolls' our history is presented to the child reader a path of spiritual struggles, creative thinking and glorious victories, which begins in the times of Hayk and Ara and reaches Avarayr, Sardarapat and Matenadaran. The poem has been highly praised and several parts of it have been included in text books.

Key words and phrases: patriotism, poem, scrolls, national value, spirit, destiny, crossroads of history.

Информация о статье: статья поступила в редакцию 26 мая 2025 г., подписана к печати в № 1.CXX (120).2025 30.06.2025.